ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Վարդանյան Գոհար Ա.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Բառակազմական գիտելիքների բովանդակությունը և սահմանները մայրենիի չափորոշչում, առարկայական ծրագրերում և դասագրքերում..... 4

1.2 Բառակազմական գիտելիքներ, նրանց ուսումնասիրման փուլերը տարրական դասարաններում..... 5

1.3 Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման միջոցներն ու ուղիները մայրենիի դասերի ընթացքում..... 8

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ

2.1 Բառակազմական գիտելիքների յուրացման գործընթացի արտացոլումը մայրենիի դասերի ընթացքում..... 10

2.2 Երկրորդ դասարանում սովորողների բառակազմական գիտելիքների և կարողությունների ուսումնասիրման արդյունքների դիտարկում..... 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

Ներածություն

Հայտնի է, որ ուսուցումը զուտ գիտելիքների ձեռքբերման գործընթաց չի, այլև անձի զարգացման և ձևավորման միջոց: Հանրակրթության գերխնդիրը բարձրարժեք ընդունակություններով և ձիրքերով, հարուստ բառապաշարով, ստեղծագործական արժեքներով ու ստեղծարար ներուժով օժտված անձի ձևավորումն է:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի տարրական դասարանների մայրենիի դասընթացի կարևոր բաժիններից՝ «Բառագիտության» (բառակազմության) ուսումնասիրումը, որը էապես նպաստում է սովորողների բառապաշարի հոկմանն ու հարստացմանը:

Բառակազմական հմտությունների տիրապետումը հնարավորություն է տալիս ընդլայնել սովորողների բառապաշարը, զինել նրանց բառերի իմաստը ակտիվ ընկալելու մեթոդով, իսկ ուսուցչի համար այն արդյունավետ միջոց է հանդիսանում մայրենիի դասի ընթացքում անհասկանալի բառերը բառակազմական վերլուծության միջոցով մեկնաբանելը:

Թեմայի արդիականությունը: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների դարում տնտեսական և շուկայական, մասնագիտական և կենսական հարաբերություններում կարևորվում են մարդու հաղորդակցական կարողությունները, որի բաղադրիչներից է բառապաշարը: Ըստ տարրական դպրոցի մայրենիի չափորոշչային պահանջների և առարկայական ծրագրի՝ կարևոր խնդիր է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումը, որին հասնելու հիմնական ուղիներից է բառակազմական տարբեր եղանակների միջոցով նոր բառերի ստեղծումը և կիրառումը: Այս կարողությունները նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանն ուղղված արդյունավետ աշխատանքի իրականացմանը: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ այս աշխատանքի կազմակերպման մեթոդիկան առավելագույնս չի ապահովում ծրագրային խնդիրների լուծումը:

Այսպիսով, մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է նշված հանգամանքով:

Մեր ուսումնասիրության նպատակն է դպրոցականների բառապաշարի հարստացման նպատակով մշակել և փորձարկել լեզվական վարժությունների և դիդակտիկ խաղերի համակարգ, որը կնպաստի կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը, և դրանց արդյունքների հիման վրա ներկայացնել մեթոդական երաշխավորություններ:

Առաջադրված խնդիրները.

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ առկա լեզվաբանական և մեթոդական գրականություն:

2.Դիտարկել տարրական կրթության չափորոշչում, առաջինից չորրորդ դասարանների մայրենիի ծրագրերում և դասագրքերում բառակազմական գիտելիքների ուսումնասիրման տեղը և դերը և պարզել՝ ինչ բնույթի աշխատանքներ է անհրաժեշտ իրականացնել մայրենիի դասերի ընթացքում կրտսեր դպրոցականների բառակազմական գիտելիքների յուրացման համար:

3.Բացահայտել բառակազմական գիտելիքների յուրացման գործընթացը արդի դպրոցում և դրա իմացության դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործում:

4.Մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների բառակազմական գիտելիքների յուրացմանը և բառապաշարի հարստացմանը նպաստող վարժությունների համակարգ, ներկայացնել մեթոդական երաշխավորումներ:

Աշխատանքի արդյունքում ձեռք բերած **նորույթը** ներկայացնում են վարժությունների համակարգը և դրանց կիրառման մեթոդները մայրենիի դասի ընթացքում:

Թեմայի ուսումնասիրման ընթացքում կիրառել ենք հետևյալ **մեթոդները՝**

1. մասնագիտական գրականության և տարրական դպրոցի կրթական փաստաթղթերի ուսումնասիրում,

2. դասալսումներ 2-3-րդ դասարաններում և դրանց քննարկումներ,

3. հարցախույզ տարրական դասարանների ուսուցիչների հետ,

4. ընտրված մեթոդների, դիդակտիկ խաղերի, վարժությունների համակարգի փորձարկում և արդյունքների վիճակագրական վերլուծություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Բառակազմական գիտելիքներ, նրանց ուսումնասիրման փուլերը տարրական դասարաններում

Լեզվաբանության կարևոր բաժիններից է բառագիտությունը: Բառագիտության ուսումնասիրումը մշտապես եղել է հայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Նրանք հեղինակել են այս բաժնի վերաբերյալ մի շարք գրքեր և հանգամանորեն անդրադարձել բառագիտության վերաբերյալ տարաբնույթ հարցերի:

Լեզուն որպես համակարգ հենվում է 2 կարևորագույն սյուների վրա՝ բառ, բառապաշար և քերականական կառուցվածք:

Բառի՝ իբրև լեզվի ինքնուրույն իմաստային կարևոր միավորի ուղղակի ուսումնասիրությամբ զբաղվում է բառագիտությունը՝ նրա տարբեր կողմերով ու դրսևորումներով:

Ըստ այդմ էլ բառագիտությունն ունի հետևյալ բաժինները.[1]

ա) իմաստաբանություն. ուսումնասիրում է բառի իմաստային համակարգը, նրանց արտահայտած իմաստներն ու կրած իմաստային փոփոխությունները, ձևախմբային տեսակները, իմաստային կապերն ու փոխհարաբերությունները:

բ) Ստուգաբանություն. ուսումնասիրում է բառերի ծագումը և նրանց ընդհանուր պատմական զարգացման ընթացքը:

գ) Բառակազմություն. զբաղվում է լեզվի բառակազմական համակարգի քննությամբ, մատնանշում է բառակազմական միջոցներն ու կաղապարները,

[1] Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 5-6:

բառերի կառուցվածքային օրենքներն ու օրինաչափությունները:

դ) Դարձվածաբանություն. ուսումնասիրում է բառերի կայուն իմաստային կապակցությունները, դարձվածքների համակարգը(առանձնահատկությունները), նրանց իմաստներին, հոմանշությանը, ծագմանն ու գործածության վերաբերող հարցերը:

ե) Բառարանագրություն. զբաղվում է ոչ միայն բառարանների կազմմամբ, այլև ուսումնասիրում է նրանց տեսակները, որոշում տարբեր բառարանների դերը, նրանց արժեքն ու նշանակությունը:

Քանի որ կրթության և դաստիարակության առաջին քայլերը իրականացվում են տարրական դասարաններում, ուստի կարևոր է բառագիտության ուսումնասիրումը տարրական օղակում:

Բառակազմական գիտելիքները մայրենիի տարրական դասընթացում իրականացվում են երկու փուլով՝ **լեզվական նախագիտելիքների ուսումնասիրում** և **լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրում:** [2]

Լեզվական նախագիտելիքների ուսումնասիրման փուլում աշակերտները նախնական պատկերացում են կազմում բառի մասին, վարժությունների կատարման միջոցով հանգում են բառի սահմանմանը:

Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման փուլում բառակազմական գիտելիքների յուրացումը ընթանում է հետևյալ շղթայով.



[2] Տե՛ս, նույն տեղում, էջ 215

Լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման փուլում դիտարկելով **նույնարմատ** բառերը վարժությունների համակարգի միջոցով, գործնականորեն բառերի մեջ կրկնվող մասը առանձնացնելու կարողության ձևավորումից հետո, լեզվական տարրական գիտելիքների փուլում սովորողները հանգում են արմատ հասկացության սահմանմանը՝ ըստ արմատի մասին իրենց ունեցած գիտելիքների և նրան բնութագրող հատկանիշների: Նրանք նկատում են, որ այն բառի հիմնական իմաստն է արտահայտում: Այս տիպի վարժություններ ընդգրկված են երկրորդ դասարանի դասագրքում և արմատ հասկացությունը սովորողները սահմանում են երկրորդ դասարանում:

Արմատի մասին գաղափար կազմելուց և այն սահմանելուց հետո աշակերտները ծանոթանում են ածանցներին: Ապա գալիս են այն եզրահանգման, որ ածանցներն ավելանում են բառի սկզբից և վերջից՝ ըստ այդմ էլ բառերը լինում են նախածանցավոր և վերջածանցավոր:

Ածանցի մասին պատկերացում կազմելուց և այն սահմանելուց հետո աշակերտներն ուսումնասիրում են **պարզ** և **բարդ** բառերը՝ հենվելով աշակերտների՝ բառից արմատի առանձնացման կարողությունների վրա: Բառի կազմության մասին ձեռք բերած այս գիտելիքները նպաստում են սովորողների լեզվի ճկունության, բառերը բառակազմական վերլուծության ենթարկելու կարողության զարգացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանը:

Բառակազմական աշխատանքների կարևորությունը և դրա զարգացնող բնույթն ընգծել է նաև Կ. Դ. Ուշինսկին: Նա կարծում էր, որ բառի ստեղծմանն ուղղված վարժությունները հետաքրքիր են աշակերտներին՝ <<նրանց համար հանդիսանալով կարծես բառերով խաղ>>: Նման վարժությունները նախապատրաստում են սովորողներին ուղղագրությանը, ինչպես նաև տալիս են նրանց <<իշխանություն այն բառապաշարի վրա, որը ենթագիտակցորեն կա իրենց հիշողությունում>>:[3]

[3] Ушинский К.Д., Собрание сочинений, Москва, 1949, стр. 353.

1.2 Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ուղիները և մեթոդները մայրենիի դասերի ընթացքում

Ժամանակակից հայերենի բառապաշարը զարգացման երկարատև փուլեր է անցել. սկսած նախագրային շրջանից՝ մեր լեզվի բառապաշարը զարգացել, հարստացել և՛ քանակական և՛ որակական նոր փոփոխություններ է կրել:

Հայոց լեզվի բառապաշարը կազմված է բառային հիմնական ֆոնդից և բառային կազմից:

Բառային հիմնական ֆոնդը բառապաշարի հիմքն է, որի մեջ մտնում են ընդհանուր գործածական բառերը, որոնք անվանում են շրջապատող իրականության առարկաները, երևույթները, հատկանիշները, գործողությունները և այլն:

Բառային հիմնական ֆոնդը լեզվի ընդհանուր բառապաշարում մեծ թիվ չի կազմում, բայց դրանք ունեն երկարատև գործածություն:

Բառապաշարի մյուս՝ ստվար մասը, որ անվանում ենք բառային կազմ, իր մեջ ընդգրկում է լեզվի բոլոր բառերը, այդ թվում և բառային հիմնական ֆոնդը:

Ի տարբերություն բառային ֆոնդի՝ բառային կազմը քանակապես ավելի ընդարձակ ու փոփոխական է: Այն ժամանակի ընթացքում համալրվում է նորանոր բառերով:[4]

Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Ամեն անհատ միջին հաշվով գիտի, հասկանում է 20-25 հազար բառ և գործածում է դրանցից 3-4 հազարը: [5]

Բառապաշարի հարստացման երկու միջոց կա. առաջին օտար լեզուներից կատարվող բառային փոխառություններն են (արտաքին միջոց), իսկ երկրորդը գրական լեզվի տվյալ փուլի բառակազմական տարբեր եղանակների շնորհիվ նոր բառերի ստեղծումն է(ներքին միջոց):

---

[4] Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 2005, էջ 120:
[5] Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Բառագիտություն, Երևան 2007, էջ 8:



Մեր գրական լեզուն այսօր ունի բառակազմական երեք եղանակ՝

ա) **ածանցում**. բառակազմական այն եղանակն է, որի դեպքում բառահիմքին ավելանում են ածանցներ, և կազմվում են նոր բառեր, ինչպես՝ տուն- տնակ, տնային, անտուն և այլն:

բ) **բառաբարդում**. արմատների կամ առանձին բառերի միացումով նոր բառեր կազմելու եղանակն է: Օրինակ՝ *գիր* և *տախտակ* բառերը, հոդակապով կապակցելով իրար, կազմում են *գրատախտակ* բարդ բառը:

գ) **հապավում**. կոչվում են այն բարդությունները, որոնք կազմված են կրճատված բաղադրիչների միացմամբ: Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետություն – ՀՀ:*

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացումը հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրի շուրջ աշխատանքի ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը բնագրային մակարդակի շրջանակում: [6]

Տարրական դասարաններում մայրենիի դասերին սովորողների բառապաշարը հարստանում է բառերը բառակազմական վերլուծության ենթարկելու միջոցով, քանի որ դա բառի իմաստի բացատրման եղանակներից մեկն է: <<Բառերի բացատրության այն եղանակը բառային աշխատանքի և ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ այդ դեպքում բացահայտվում են բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը>>:[7]

---

[6] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018, էջ 278:
[7] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018, էջ 280:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ

2.1. Բառակազմական գիտելիքների յուրացման գործընթացի արտացոլումը մայրենիի դասերի ընթացքում

Աշխատանքի հիմնախնդրի շրջանակներում, նախքան բառակազմական գիտելիքների ուսումնասիրումը, փորձել ենք պարզել երկրորդ դասարանի աշակերտների բառապաշարի զարգացվածության մակարդակը,:

Սովորողների բառապաշարը ստուգելու նպատակով կազմեցինք հայտորոշիչ թեստ, ինչը հնարավորություն տվեց պարզել, թե որքանով է հարուստ աշակերտների բառապաշարը տրված թեմայի շրջանակներում և ինչպիսի փոփոխությունների այն կարող է ենթարկվել որոշակի աշխատանքից հետո:

Քանի որ աշակերտները դեռ չէին ուսումնասիրել բառակազմությունը, ապա հայտորոշիչ թեստի պահանջներում նշված չէին *արմատ, ածանց, բարդ բառեր* հասկացությունները, սակայն հնարավորություն էր տալիս պարզել, թե որքանով է սովորողների բառապաշարը հարուստ տվյալ ածանցներով կամ արմատներով կազմված բառերով:

Հիմնվելով չափորոշչային պահանջների վրա՝ ըստ որի աշակերտը պետք է կարողանա ճանաչել ածանցավոր բառերը և կազմել այդ ածանցներով նոր բառեր, պետք է իմանա բառերի որոշակի քանակի բացատրություն և դրսևորի համապատասխան թեմատիկ բառապաշար, կազմեցինք տարամակարդակ թեստ:

Պարզեցինք սովորողների բառապաշարի զարգացվածության աստիճանը նախքան բառակազմական գիտելիքները ուսումնասիրելը՝ ըստ մեր կազմած չափանիշների.

Աղյուսակ 2.

Շատ բարձր	*Բարձր*	*Միջին*	*Ցածր*	*Շատ ցածր*
66-77 բառ	49-65 բառ	26-48 բառ	10-25 բառ	0-9 բառ

Աշխատանքը ստուգելուց հետո արձանագրեցինք հետևյալ արդյունքները.

Աղյուսակ 3

Հայտորոշիչ թեստ	%
Շատ բարձր	0
Բարձր	43
Միջին	40
Ցածր	17
Շատ ցածր	0

Տրամագիր 1.



Թեստի արդյունքներից պարզ դարձավ, որ աշակերտների 43%-ը ցուցաբերեց բարձր արդյունք, 40%-ը միջին, իսկ 17%-ը ցածր արդյունքներ: Շատ բարձր և շատ ցածր արդյունքներ դասարանում չցուցաբերեցին:

Արդյունքների վերլուծություններից հետո մեզ հետաքրքիր էր կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը նպաստող մեթոդների արդյունավետության վերաբերյալ տարրական դասարանների ուսուցիչների կարծիքը: Պարզելու համար նաև, թե բառակազմական գիտելիքների յուրացմանը նպաստող ինչ մեթոդներ և հնարներ են կիրառում ուսուցիչները կազմեցինք հարցաթերթիկ, որը անցկացրինք 20 ուսուցիչների շրջանակում:

Հարցմանը մասնակցող 1-4-րդ դասարանների բոլոր դասվարները որպես անծանոթ բառերը բացատրելու միջոց դիտարկել են բառակազմանակ վերլուծության ենթարկելը և հաճախ կիրառել դա իրենց դասագործընթացում: Ինչպես նաև բոլոր դասվարները համարել են բառակազմական գիտելիքները բառապաշարի հարստացման հիմնական միջոց և այն հարցին, թե ինչին է նպաստում գիտելիքների յուրացումը, պատասխանել, որ այն նպաստում է բառապաշարի հարստացմանն ու ճիշտ խոսքի կառուցմանը, լզվամտածողության ձևավորմանն ու վերլուծելու համադրելու կարողությանը, ինչպես նաև հիմք է հանդիսանում խոսքում բառի ճիշտ կիրառությանը:

Բառակազմական գիտելիքների յուրացումն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ դասվարներն առաջարկեցին արդյունավետ և օգտակար հնարներ և

մեթոդներ կիրառել, օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ, ավելացնել բառակազմական գիտելիքների վերաբերյալ վարժությունները:

Հաշվի առնելով տարրական դասարանների ուսուցիչների կարծիքը, մշակեցինք և կազմեցինք վարժությունների համակարգ, մի շարք մեթոդական հնարներ և կիրառեցինք խաղային և համագործակցային տեխնոլոգիան՝ բառակազմական գիտելինքերի յուրացմանը և բառապաշարի հարստացմանը նպաստող:

Կից ներկայացնում եմ բառակազմական գիտելիքների ձեռբերմանն ուղղված այն աշխատանքները, մեդիալաբորատորիայում կազմած խաղերը, որոնք իրականացրել ենք մայրենիի դասերի, ինչպես նաև արտադասարանական դասերի ընթացքում:

Աշխատանքի նպատակը՝ ածանցի և ածանցավոր բառերի մասին գաղափարի կազմում:

1. Ածանցավոր բառերի շուրջ իրականացրինք խաղ: Գրատախտակին փակցված թղթե երեք ծաղիկների միջուկում գրեցինք պարզ բառեր՝ *տուն, գույն, ընկեր:*

Աշակերտների մոտ եղած ածանցներն են՝ ան, ակ, ային, ական, ավոր, եղ, ան, ատ, ուհի, ություն, ական, ովի:







Նրանք այս ածանցներով թերթիկները միացրին համապատասխանաբար իրենց ծաղիկներին՝ կազմելով ածանցավոր բառեր:

2. Աշակերտները միասին կատարեցին https://learningapps.org/createApp.php կայքի միջոցով կազմված առաջադրանքը: Այն նպաստեց տրված ածանցների յուրացմանը, նրանցով կզմած բառերի ակտիվացմանը:

3. Կազմակերպեցինք **մրցույթ խմբերի միջև:**

Դասարանը բաժանվեց 3 խմբի, իսկ գրատախտակին համապտասխանաբար փակցվեց 3 պաստառ՝ գրպանիկով, որոնց վրա գրված էին մեկական պարզ բառեր:

արդյունքները ստուգվեցին և հաղթեց այն խումբը, որն ամենից շատ բարդ բառեր էր հավաքել և ամենաքիչն էր սխալվել:

Այնուհետև կատարեցինք քննարկում, որոշեցինք իրենց գտած բառերի արմատները: Եվ յուրաքանչյուր աշակերտ, մեկ նախադասություն ասելով և միմյանց շարունակելով, հյուսեցին փոքրիկ պատմություն՝ կիրառելով արկղից հետևյալ բառերով.

պարզ՝ լավ, վատ, պատիժ, գործ, բարի,

բարդ՝ ժպտերես, բարեսիրտ, հյուրընկալ, անուշահամ, լավատես

ածանցավոր՝ ընկերություն, աշխատանք, օգնություն, խնդրանք, միասնություն:

6. Աշակերտները կատարեցին https://learningapps.org/createApp.php կայքի միջոցով կազմված առաջադրանքը:

Այսպիսի մշակված, նպատակուղղված աշխատանքների արդյունքում խաղերի և վարժությունների համակարգի միջոցով սովորողները ոչ միայն ձեռք բերեցին անհրաժեշտ բառակազմական գիտելիքները, այլև նրանց բառապաշարը հարստացավ մի շարք նոր ածանցավոր և բարդ բառերով:

2.2 Երկրորդ դասարանում սովորողների բառակազմական գիտելիքների և կարողությունների ուսումնասիրման արդյունքների դիտարկում

Մեր կատարած աշխատանքի արդյունքը վերլուծելու և ստուգելու նպատակով կատարեցինք նախնական /հայտորոշիչ թեստի/ և վերջնական /ստուգողական թեստի/ արդյուքների համեմատություններ՝ դրանք ենթարկեցինք քանակական և որակական հետազոտության:

Համեմատելով առաջին և երկրորդ արդյունքները արձանագրեցինք հետևյալ փոփոխությունները և ներկայացրինք դիագրամի միջոցով.

Աղյուսակ 7.

Թեստ	Սկզբնական փուլ	Վերջնական փուլ
	%	
Շատ բարձր	0	9
Բարձր	43	54
Միջին	40	31
Ցածր	17	6
Շատ ցածր	0	0

Տրամագիր 12.



Վերլուծելով և համեմատելով առաջին և երկրորդ թեստի արդյունքները, նկատում ենք, որ աշակերտների կողմից թեստը ավելի հաջող է կատարվել՝ չնայած ավելի բարդ լինելուն: Նրանց ցուցանիշները երկրորդ թեստից ավելի տպավորիչ էին, ինչը խոսում է մեր իրականացրած աշխատանքի արդյունավետության մասին:

Եթե մինչ մեր կիրառած խաղերը, հնարները, մինչ բառակազմական գիտելիքների յուրացումը կային աշակերտները, ովքեր բառերի մեջ չէին գտնում ընդհանուր մասը՝ ընդհանուր արմատը, ապա երկրորդ թեստի արդյուքները ցույց տվեցին, որ բոլորի մոտ ստացվել է գտնել նույն արմատ ունեցող բոլոր բառերը:

Նախքան բառակազմական գիտելիքների յուրացումը աշակերտների մեծ մասը տրված բառերով և մասնիկներով(ածանցներով) կազմել էր ավելի քիչ քանակությամբ բառ, քան երկրորդ թեստի կատարման ընթացքում, ինչը խոսում է նոր ածանցավոր և բարդ բառերի յուրացմանը սովորողների կողմից և դրանց ակտիվացմանը ակտիվ բառապաշար:

Եզրակացություններ

1. Բառակազմական գիտելիքների ուսումնասիրությանն ուղղված ծավալուն անդրադարձ ենք նկատել առկա մասնագիտական գրականության մեջ. այս հիմնախնդիրը մշտապես եղել է լեզվաբանների և մեթոդիստների ուշադրության կենտրոնում, ովքեր հրատարակել են բազմաթիվ գրքեր բառագիտության վերաբերյալ, ինչպես նաև մեթոդական գրականության մեջ բազմաթիվ տեսակետներ են ներկայացրել, թե ինչպես կարելի է ուսումնասիրել բառակազմական գիտելիքները տարրական օղակում, սակայն մանրամասն անդրադարձ չի կատարվել, թե ինչ աշխատանքներ կազմակերպել այս թեմայի յուրացումն առավել արդյունավետ դարձնելու և դրա միջոցով սովորողների բառապաշարը հարստացնելու ուղղությամբ:

2. Բացահայտեցինք, որ մայրենիի դասաժամերի տարբեր փուլերում, բառակազմական տարրական գիտելիքների ուսումնասիրության գործընթացում կիրառվող տարաբնույթ մեթոդների, հետաքրքրաշարժ ուսումնական խաղերի, վարժությունների համակարգի և մեթոդական հնարների կիրառությունը լեզվական նյութի ուսումնասիրությունն ու յուրացումը դարձնում են ավելի արդյունավետ և հետաքրքրաշարժ:

3. Բառակազմական գիտելիքների ուսումնասիրման նպատակով մեր կողմից պլանավորված և ժամանակակից մեթոդներով, խաղերով անցկացրած փորձնական դասերը լեզվական գիտելիքների ուսումնասիրումը դարձնում են ավելի մատչելի և հետաքրքրաշարժ: Սովորողները գործնական ճանապարհով ձեռք են բերում գիտելիքներ, սովորում են դրանք խոսքում ճիշտ կիրառել, ինչպես նաև անկաշկանդ հաղորդակցվել միմյանց հետ, միաժամանակ կարողանում են խմբում միասին աշխատել, հանդես գալ ինչպես սովորողի, այնպես էլ սովորեցնողի դերում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Եր., <<Լույս>>, 1974:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
3. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Եր., <<Արտագերս>>, 20017:
4. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Ուս. Ձեռնարկ, Եր., <<Արտագերս>>, 20011:
5. Ավագյան Մ., Պատկերազարդ քերականություն 2, Եր., <<ՀԱՇ ԸՆԴ ՀԱՇ ՓՐԻՆԹ>>, 2016:
6. Բալայան Ա, 200 խաղ, Եր., <<Զանգակ>> , 2017:
7. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Եր., 2009:
8. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., <<Զանգակ>>, 2018:
9. Գյուլամիրյան Ջ., <<Մայրենի լեզու 2>>, Լեզվական վարժություններ և առաջադրանքներ , Եր., <<Լույս>> 2006:
10. Եզեկյան Լ.,Արդի հայերենի բառապաշարի հարստացման ուղիները, Եր., 2004:
11. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2005:
12. Եզեկյան Լ.,Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու 10: Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկակն հոսքերի 10-րդ դասարանի դասագիրք, Եր., <<Մակմիլան-Արմենիա>>, 2009:
13. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Բառագիտություն, Եր., 2007:
14. <<Հայոց լեզու, գրականություն>>, Կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագրեր (1-9 դասարաններ), 2011:
15. <<Հայոց լեզու, գրականություն>>, Հանրապետության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Եր., <<Անտարես>>, 2004:
16. Սարգսյան Վ., Պատկերազարդ հայոց լեզու , Եր., << ՄՀՄ գրատուն>>, 2017:
17. Милославский И.Г. , Как разобрать и собрать слово, Москва, Просвещение, 1993.
18. Ушинский К.Д., Собрание сочинений, Москва, 1949.